

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի ծառայությունը եկեղեցուն	Քրիստոսը, որ թե փիլիսոփայություն	Պողոսը հետաքրքրված է Կողոսացիներով	Պողոսի գործը որպես Եկեղեցու ծառայող	Պողոսի մտահոգությունը Կողոսացիների հավատքի համար
(1:24-2:5)	2:1-10	(1:24-2:7)	(1:24-2:3)	2:1-3
Կյանքի լիությունը Քրիստոսում			2:4-5	2:4-5
2:6-15		Չգուշացում կեղծ ուսմունքների դեմ	2:6-7	2:6-7
		2:8-15	2:8-10	2:8
				Միայն Քրիստոսն է ամբողջ մարդկության և հրեշտակների Գլուխը
	Քրիստոս և ոչ թե օրինապաշտություն			2:9-10
	2:11-23		2:11-15	2:11-13
				2:14-15
				Այս աշխարհի սկզբունքների հիման վրա կեղծ ասկետիզմի դեմ
2:16-19		2:16-19	2:16-19	2:16-19
Նոր Կյանք Քրիստոսում			Քրիստոսի հետ ապրելն ու մեռնելը	
(2:20-3:17)				
2:20-3:4		2:20-23	2:20-3:4	2:20-23

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք պետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 2:1-5
¹Ուզում եմ, որ դուք իմանաք, թե ինչ մեծ դժվարություն եմ կրում ձեզ համար և լավողիկեցիների համար, և բոլոր նրանց համար, ովքեր իմ երեսը անձնապես չեն տեսել, ²որպեսզի նրանց սրտերը մխիթարվեն, սիրով միահյուսված լինելով, հասնեն կատարյալ իմաստության ամբողջ ճոխությանը, Աստծո խորհրդի իմացությանը, և՛ Հոր, և՛ Քրիստոսի, ³Ում մեջ պահված են իմաստության և գիտության բոլոր գանձերը: ⁴Եվ այս ասում եմ, որ չլինի թե մեկը մոլորեցնի ձեզ հրապուրիչ խոսքերով: ⁵Քանի որ, թեև մարմնով հեռու եմ, բայց հոգով ձեզ հետ եմ, և ուրախանում եմ՝ տեսնելով ձեր բարեկարգությունը և Քրիստոսի հանդեպ ձեր հավատի հաստատությունը:

2:1 «ինչ մեծ դժվարություն /անգլ.՝ պայքար/» «Դժվարություն» կամ «պայքար» բառը մարզական կամ ռազմական տերմին է (տես՝ Կող. 1:29; 4:12): Այստեղ այն կիրառվում է արպես (1) բարեխոսական աղոթքի համար որպես փոխաբերություն կամ (2) հեթանոսների համար Պողոսի գործը:

❖ **«լավողիկեցիներ/Լավողիկե»** Սա Կողոսիայի մոտակայքում, ընդամենը 10 մղոն հեռավորության վրա՝ միևնույն հարթավայրում գտնվող քաղաք էր (տես՝ Կող. 4:13,15,16, Հայտն. 3:14): Ըստ երևույթին, Եպափրասը եկեղեցիներ էր հիմնադրել Լիկուս Գետի Հարթավայրում գտնվող քաղաքներում՝ Կողոսիայում, Լավողիկեում և Երապոլիսում (տես՝ Կող. 4:13): Այս նամակը պետք է ընթերցվեր այդ քաղաքների եկեղեցիներում:

❖ **«բոլոր նրանց համար, ովքեր իմ երեսը անձնապես չեն տեսել»** Այս եկեղեցին և Լիկուս Գետի Հարթավայրի մյուս երկու եկեղեցիները Պողոսը չէր սկսել: Դրանք հիմնադրել էր Եպափրասը (տես՝ Կող. 1:7): Այդուհանդերձ, Պողոսը աղոթքով ցավ էր քաշում նրանց համար: Նա սիրում էր Եկեղեցին, և եկեղեցիները:

2:2 «որպեսզի նրանց սրտերը մխիթարվեն» Սա նպատակ արտահայտող ենթանախադասություն է, անդեմ կրավորական ստորադասականով: Սկիզբ է առել միևնույն *paracletos* արմատից, որը կիրառվում է Սուրբ Հոգու համար Հովհ. 14:16,26; 15:26; 16:7-ում և Հիսուսի համար՝ 1 Հովհ. 2:1-ում: Հիմնականում նշանակում է «մոտ կանչել օգնության կամ քաջալերանքի համար»: Այն փոխաբերություն էր Հռոմեական օրինական համակարգից. դատապաշտպանի հասկացությունը ծագել է այս բառից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ
SPECIAL TOPIC: THE HEART

Հունարեն *kardia* տերմինը կիրառվում է Մեպտուազինտայում և ՆԿ-ում նկարագրելու երբայերեն *leb* (BDB 523, KB 513) տերմինը: Այն օգտագործվում է մի քանի կերպ (տես՝ Bauer, Arndt, Gingrich, *A Greek-English Lexicon*, /Հունարեն-անգլերեն բառարան/ pp.403-404):

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը՝ անձի փոխաբերական իմաստը (տես՝ Գործք.14:17, 2 Կորնթ. 3:2-3, Հակ.5:5):
2. Հոգևոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բարբերը)
 - ա. Աստված գիտի սիրտը (Ղուկ.16:15, Հռոմ.8:27, 1 Կորն.14:25, 1 Թեսաղ.2:4; Հայտ.2:23):
 - բ. Մարդկանց հոգևոր կյանքի իմաստով (տես՝ Մատթ.15:18-19, 18:35, Հռոմ.6:17, 1 Տիմ. 1:5, 2 Տիմ.2:22, 1 Պետ.1:22):
3. Մտավոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բանականությունը. տես՝ Մատթ.13:15; 24:48, Գործք 7:23, 16:14, 28:27, Հռոմ.1:21, 10:6, 16:18, 2 Կորն.4:6, Եփես. 1:18, 4:18, Հակ.1:26, 2 Պետ. 1:19, Հայտն.18:7, սիրտը և միտքը ներկայացված որպես հոմանիշներ՝ 2 Կորնթ.3:14-15 և Փիլ. 4:7):
4. Կամային հատկանիշների կենտրոնը (այսինքն՝ կամքը, տես՝ Գործք 5:4, 11:23, 1 Կորնթ. 4:5, 7:37, 2 Կորնթ.9:7)
5. Չգացմունքների կենտրոնը (տես՝ Մատթ.5:28; Գործք 2:26,37; 7:54; 21:13; Հռոմ.1:24; 2 Կորնթ.2:4; 7:3; Եփես.6:22; Փիլ.1:7)
6. Հոգու գործունեության համար եզակի տեղը (տես՝ Հռոմ. 5:5; 2 Կորնթ. 1:22; Գաղ. 4:6 [այսինքն՝ Քրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17])
7. Սիրտը հանդիսանում է ամբողջական անձի փոխաբերությունը (տես՝ Մատթ. 22:37, մեջբերված՝ 2 Օր. 6:5): Մտքերը, նպատակները և գործողությունները, որոնք վերագրվում են սրտին, լիովին հայտնում են անձի անհատականությունը: ՀԿ-ում կան այս տերմինի կիրառության մի քանի զարմանալի օրինակներ՝
 - ա. Ծննդ. 6:6; 8:21, «Աստված տրտմեց Իր սրտում» նաև ստուգեք Ովսեա 11:8-9
 - բ. 2 Օր. 4:29; 6:5, «քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով»
 - գ. 2 Օր. 10:16, «անթափաստ սիրտ» և Հռոմ. 2:29
 - դ. Եզեկ. 18:31-32, «մի նոր սիրտ»
 - ե. Եզեկ. 36:26, «մի նոր սիրտ» հակադրված՝ «քարե սրտի» հետ (տես՝ Եզեկ. 11:19; Չաք .7:12):

❖ **«միահյուսված լինելով»** Սա անդեմ կրավորական դերբայ է *syn* բաղադրյալ բառի: Այն կիրառվել է Մեպտուազինտայում «ուսուցում, խրատ» բառի համար (տես՝ Եսայի 40:13, 1 Կորնթ.2:16): Պողոսի թղթերում այն կիրառվում է որպես ֆիզիկական մարմնից աճելով հասուն միաբանություն դառնալու փոխաբերությամբ (տես՝ Կող. 2:19; Եփես. 4:16): Այս աճը և միաբանությունը հնարավոր են (կրավորական սեռեր) միայն Քրիստոսի, Հոգու և սիրտ մեջ: Հերձվածողության իրավիճակում գնվող եկեղեցում միաբանությունը շատ կարևոր էր (տես՝ Եփես. 4:1-6):

NASB	«ամբողջ հարստություն»
NKJV, NRSV	«ամբողջ ճոխություն»
TEV	«լիարժեք հարստություն»
NJB	«նրանք հարուստ են»

Պողոսը հաճախ է օգտագործում «ճոխություն» տերմինը, նկարագրելու Աստծո սերը Քրիստոսում (տես՝ Հռոմ. 2:4, 9:23; 11:12,33; Եփես. 1:7,18; 2:7; 3:8,16; Փիլ.4:19; Կող.1:27; 2:2): Հավատացյալները հոգևոր հարուստներ են (տես՝ Հակ. 1:9) Քրիստոսում Աստծո հարստության և առատաձեռնության շնորհիվ (տես՝ 2 Կորնթ. 8:9; 9:15): Այստեղ «ճոխությունը» («բոլոր գանձերը», տես՝

Կող .2:3) հավատացյալների կողմից ավետարանը հասկանալն է: Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք հայտնության պարզևի մասին:

❖ **«կատարյալ իմաստության/հասկացողության ամբողջ ճոխությանը»** Պողոսը շարունակում է օգտագործել այնպիսի տերմիններ և հասկացություններ, որոնք օգտագործում էին գնոստիկ սուտ վարդապետները: Այս արտահայտության մեջ «ամբողջ ճոխություն/վստահություն» խոսքը *plērōma* բառի բաղադրյալ մի տեսակ է, որը հերետիկոսներն օգնագործում էին հրեշտակային մակարդակների համար:

«Հասկացողություն» (*sunesis*) տերմինը նաև *syn* –ի բաղադրյալն է: Այն կապված է *plērōma* բառի հետ Կող . 1:9-ում: Դրա ստուգաբանությունը սկիզբ է առել մտքերի վտակների իրար միահյուսվելու՝ իրար հանդիպելու, հասկացությունից: Այս սուտ վարդապետները փորձում էին Քրիստոնեությունը դարձնել հունական հասարակության և մշակույթի համար հասկանալի, համապատասխան և կիրարկելի: Այս նույն շարժառիթն է մերօրյա շատ աղանդավորների դրդում ավետարանը հարմարեցնել ժամանակակից մտածելակերպերի կամ կատեգորիաների հետ:

❖ **«ճշմարիտ իմացությանը»** Կրկին, սա պետք է դիտարկել կեղծ վարդապետների կողմից փրկության վերաբերյալ «ժածուկ» բարձրագույն գիտությունը ընդգծող և հաստատող ֆոնին հակառակ: Պողոսի համար «ժածուկ գիտությունը» (*epignōskō*) գտնվում էր միայն Քրիստոսի ավետարանում, որը «Աստծո խորհուրդն է»:

NASB, NKJV, NRSV	«խորհուրդ»
TEV	«ժածուկ ճշմարտություն»
NJB	«այս ամեն ինչի համար ժածուկ պատճառ»

Աստված ունի մարդկության փրկության համար միասնական նպատակ (տես՝ Եփես . 2:11-3:13), որն անգամ անկումից առաջ էր (տես՝ Ծննդոց 3): Այս ծրագրի մասին ակնարկներ կան հայտնված ՀԿ-ում (տես՝ Ծննդ . 3:15; 12:3; Ելից 19:5-6 և մարգարեներում տիեզերական հատվածներում): Սակայն, այլ ամբողջ ծրագիրը դեռևս հստակ չէր նախքան Հիսուս Քրիստոսի ավետարանի հայտնությունը (տես՝ 1 Կորնթ . 2:1-8): Հիսուսի և Սուրբ Հոգու գալստյամբ այն սկսում է դառնալ շատ ավելի ակնհայտ: Պողոսը կիրառում է «խորհուրդ» տերմինը՝ նկարագրելու փրկության ամբողջ ծրագիրը (տես՝ 1 Կորնթ . 4:2; Եփես . 6:19; Կող . 4:3; 1 Տիմ . 3:9): Տե՛ս Հատուկ Թեմա, Եփես . 3:3-ում:

❖ **«սրտեր»** Տե՛ս Հատուկ Թեմա . Միրտ, Կող . 2:1-ում:

NASB	«որ է, Քրիստոսն Ինքը»
NRSV	«որ է, Քրիստոսն Ինքը»
NKJV	«և՛ Հոր, և՛ Քրիստոսի»
TEV	«որն է Ինքը Քրիստոսը»

Գոյություն ունեն մի քանի հունարեն ձեռագրերի տարբերակներ: P⁴⁶-ի անսովոր շարահյուսությունը՝ «և՛ Հոր, և՛ Քրիստոսի», ամենալավն է բացատրում բոլոր մյուս տարբերակների ծագումնաբանությունը (տե՛ս՝ Հավելված Երկու, II, Բ . 1-6): Աստծո խորհուրդը Քրիստոսն է՝ Նրա կյանքը, ուսմունքները, չարչարանքը, մահը, հարությունը, համբարձումը և Երկրորդ Գալուստը: Հոր հավիտենական, տիեզերական փրկության ծրագրի խորհուրդը իրականացվում է մարմնացած Որդու միջոցով:

Տե՛ս՝ Հատուկ Թեմա . Խորհուրդը Պողոսի թղթերում, Եփես . 3:3-ում:

2:3 «Ում մեջ պահված են իմաստության և գիտության բոլոր գանձերը» Այս համարը հերքում է սուտ վարդապետների շեշտադրությունը և մեծարում է Քրիստոսի անձը: Աստծո խորհուրդը (հայտնությունը) անձ է, Աստծո ծրագիրը անձ է (տես՝ NASB, NKJV, NRSV, TEV), և Աստծո փրկությունը նույնպես անձ է, և ոչ թե մարդկային գիտություն կամ ջանք:

Քերականորեն հնարավոր է, որ այս բացման արտահայտությունը չեզոք սեռի է («դրա մեջ»), և ոչ թե արական սեռի («Ում մեջ»), և հետևաբար նկատի ունենա խորհուրդը (տես՝ NJB):

2:4 «որ չինի թե մեկը մոլորեցնի ձեզ հրապուրիչ խոսքերով» Սա նպատակի պարագայով ենթանախադասություն է՝ ներկա ժամանակ չեզոք սեռ (դեպոնենտ) ստորադասական եղանակ: Այս բայը կիրառվում էր երկու իմաստով՝ (1) մեկին խաբելու կամ մոլորեցնելու (տես՝ Հակոբոս 1:22) և (2) կեղծ պատճառաբանելու, խաբելու կամ խեղաթյուրելու իմաստով:

Այս մոլորությունը իրականացվում էր պերճախոս դատողության, այք ծակող վիճաբանությունների և/կամ համոզիչ ճառերի միջոցով: Սուտ վարդապետները միշտ տրամաբանող, գրավիչ, համոզող անհատներ են լինում (Պողոսից շատ տարբերվող, տես՝ 1 Կորնթ. 2:1-5):

2:5 «թեև» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է ճիշտ ըստ հեղինակի տեսակետի կամ համաձայն իր գրականական նպատակների: Ըստ երևույթին Պողոսը ֆիզիկապես նրանց հետ չէր, սակայն աղոթում էր նրանց համար և նրանց հետ մեկ էր գգում իրեն:

❖ **«մարմնով հեռու եմ»** Սա տառացիորեն նշանակում է «մարմնով բացակա լինել»: Տե՛ս Հատուկ Թեմա . Մարմին (*sarx*), Կող . 1:22-ում:

❖ **«հոգով ձեզ հետ եմ»** Պողոսի սիրտը և աղոթքները մշտապես Աստծո Թագավորության այս մեկուսի, փոքրիկ, հալածված ջոկատի հետ էր: Այստեղ «հոգի» բառը վերաբերում է մարդու իրական էությանը: Այս նույն արտահայտությունը կիրառվում է 1 Կորնթ. 5:3-ում:

NASB	«լավ կարգուկանոնը . . . հաստատությունը»
NKJV	«բարեկարգությունը . . . հաստատականությունը»
NRSV	«բարոյական . . . ամրությունը»
TEV	«անսասան ամրությունը, որով միասնական կանգնած եք»
NJB	«բարեկարգ . . . հաստատուն»

Սրանք (1) ռազմական տերմիններ են՝ կազմակերպվածության և հաստատականության համար օգտագործվող (տես՝ Եփես. 6:10-17) կամ (2) շինարարական տերմիններ՝ ամուր, հաստատ հիմքի համար կիրառվող (տես՝ 2 Տիմ. 2:14-19; 1 Պետ. 5:9): Այս տերմինները նկարագրում են Կողոսացի հավատացյալների հավատքը նույնիսկ սուտ վարդապետների հարձակումների և մոլորությունների մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 2:6-7
Պատի ինչպես ընդունեցիք Քրիստոս Հիսուս Տիրոջը, այնպես ընթացեք Նրանում. 7 արմատացած, Նրա վրա կառուցված և հավատի մեջ հաստատված՝ ինչպես որ սովորեցիք, աճելով նրա մեջ՝ շնորհակալությամբ:

2:6 «Ուստի ինչպես ընդունեցիք Քրիստոսին» Այստեղ օգտագործված բայը (*paralambanō*, անորոշ կատարյալ ժամանակի, ներգործական սեռի սահմանական եղանակ է) ունի երկու նշանակություն՝

1. անձին ընդունելու՝ ողջունելու իմաստը (տես՝ Մատթ. 1:20; Հովի. 1:11; 14:3)
2. «ավանդույթն» ընդունելու իմաստը (տես՝ 1 Կորնթ. 11:23; 15:1,3; Գաղ. 1:9,12; Փիլ. 4:9; 1 Թեսաղ. 2:13; 4:1; 2 Թեսաղ. 3:6):

Կողոսացիները լսել էին ավետարանի բովանդակությունը Եպափրասի քարոզչության միջոցով, ապա նրանք անձնապես ընդունել էին Ավետարանի Անձը (Հովի. 1:12): Սուրբգրային հավատքը ուխտ է: Աստված մշակում ծրագիրը և առաջին կայր ստեղծում (տես՝ Հովի. 6:44, 65), սակայն անհատները պետք է արձագանքեն ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և հարատևությամբ (Կող. 2:6): Սուտ վարդապետների պատգամը աղավաղում էին թե՛ ավետարանի բովանդակության աստվածաբանությունը և թե՛ ավետարանի Անձի:

❖ «Հիսուս Քրիստոս Տիրոջը» «Հիսուսը Տեր է» արտահայտությունը վաղ եկեղեցու շրջանում ջրի մկրտության ժամանակ կատարած հավատքի հանրային դավանություն էր (տես՝ Հռոմ. 10:9-13; 1 Կորնթ. 12:3; 2 Կորնթ. 4:5; Փիլ. 2:11): Այն հաստատում էր, որ Նազովրեցի Հիսուսն է ՀԿ-ի Մեսիան և Աստվածության մարմնացումը (տես՝ Փիլ. 2:6-11):

❖ «ընթացե՛ք Նրանում» Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է: Քրիստոնեությունը միայն աստվածաբանական հավատո հանգանակ չէ, այլ նաև հավատքի կյանք է («քայլեք, ընթացեք», տես՝ Կող. 1:10; Եփես. 4:1,17; 5:2,15): Փրկությունը ապրանք չէ, որ հավատացյալները դառնում են դրա սեփականատերը, այլ անձ է, որը դառնում է նրանց Տերը: Պողոսն այստեղ կենտրոնանում է Քրիստոնեական հավատքի անձնական առանձնահատկության վրա, ինչպես որ Հովհաննեսի Ավետարանն է անում (տես՝ Հովհ. 1:12; 3:16; 6:40; 11:25-26):

2:7 Այս համարը չորս դերբայ է պարունակում (որոնք կիրառվել են որպես հրամայականներ), որոնք նկարագրում են արժանի ընթացքը (տես՝ Կող. 2:6):

1. «**արմատացած**» Սա վաղակատար ժամանակի կրավորական սեռ է, որն արտահայտում է ավարտված վիճակ՝ սկիզբ առած Աստծուց: Այս գյուղատնտեսական փոխաբերական արտահայտությունը յուրահատուկ է Կողոսացիների և Եփեսացիների թղթերին (տես՝ Կող. 3:17):
2. «**Նրա վրա/մեջ կառուցված**» Սա ներկա ժամանակի կրավորական սեռ է, որը շարունակվող գործողություն է՝ Աստծուց: Պողոսը հաճախ էր կիրառում այս շինարարական փոխաբերությունը՝ նկարագրելու Աստծո ժողովրդին (տես՝ 1 Կորնթ. 3:5; Եփես. 2:20,22): Այն կարող էր վերաբերել սուրբերին, որպես տաճար (անհատապես, 1 Կորնթ. 6:19 և հավաքական տեսքով՝ 1 Կորնթ. 3:16):
3. «**հավատի մեջ հաստատված**» Սա ևս մեկ ներկա ժամանակի կրավորական սեռ է, որը շարունակվող գործողություն է՝ սկիզբ առած Աստծուց: Գոյականը («հաստատություն») գտնվում է Փիլ. 1:7-ում և Եբր. 6:16-ում: Բայը ենթադրում է «հաստատել» (տես՝ 1 Կորնթ. 1:6,8; 2 Կորնթ. 1:21), «գորացնել» և «վավերացնել», հաճախ փաստարկով (տես՝ Հռոմ. 15:8; 1 Կորնթ. 1:8):

«Ձեր հավատի մեջ» արտահայտությունը կարելի է հասկանալ որպես (1) սուբյեկտիվ հավատք՝ Քրիստոսին վստահելով կամ (2) օբյեկտիվ հավատք՝ Քրիստոսի վերաբերյալ վարդապետությունները (տես՝ Հուդա 3, 20):

4. «**անելով նրա մեջ շնորհակալությամբ**» Սա ներկա ժամանակի ներգործական սեռ է, որը շարունակվող գործողություն է՝ սկիզբ առած Աստծուց: Քրիստոնեական կյանքը Քրիստոսի մեջ Նրա շնորհի համար Աստծուց գոհանալու կյանք է: Սա արտահայտվում է ուրախ սրտով հնազանդության և հարատևության մեջ: Իմանալ Ավետարանը նշանակում է ցնձալ աննկարագրելի ուրախությամբ (տես՝ Կող. 1:12) և ապրել պատշաճ կյանքով (տես՝ Կող. 1:10-11) գոհունակությամբ (տես՝ Կող. 3:17): Տես՝ Հատուկ Թեմա. Առատություն (*Perisseuo*) Եփես. 1:8-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՍՏՑԻՆԵՐԻ 2:8-15

⁸Չգուշացե՛ք, չլինի թե մեկը ձեզ գերի դարձնի փիլիսոփայությամբ և դատարկ խաբեությամբ, որոնք հիմնված են մարդկային ավանդությունների, կամ աշխարհի սկզբունքների վրա, և ոչ թե Քրիստոսի: ⁹Քանզի Նրա մեջ է բնակվում Աստվածության ամբողջ լիությունը՝ մարմնապես: ¹⁰Եվ դուք կատարյալ եք Նրանում, Ով գլուխն է ամեն իշխանության և պետության, ¹¹Նրա մեջ դուք էլ թլփատվեցիք անձեռագործ թլփատությամբ՝ Քրիստոսի թլփատությամբ մի կողմ դնելով մեղքերի մարմնավոր մարմինը. ¹²Թաղվելով Նրա հետ մկրտության մեջ, որի մեջ նաև հարություն առաք Նրա հետ՝ Աստծո գործությանը հավատալով, որ Նրան հարություն տվեց մեռելներից: ¹³Եվ ձեզ, որ մի ժամանակ մեռած էիք մեղքերի և ձեր մարմնավոր անթլփատության մեջ, կենդանացրեց Նրա հետ՝ ներելով մեր բոլոր

հանցանքները. ¹⁴մեզ հակառակ և մեր դեմ գրված պարտամուրհակը ջնջելով՝ Նա մեջտեղից վերացրեց այն՝ խաչափայտին գամելով: ¹⁵Մերկացնելով իշխանություններին և պետություններին՝ հրապարակավ խայտառակեց և դրանով հաղթանակ տարավ նրանց վրա:

2:8-15 Հունարենում սա մի երկար նախադասություն է, որը ներկայացվում է առանց ընդհատումների:

2:8
NASB, NRSV, TEV «զգուշացե՛ք»
NKJV «զգույշ եղե՛ք»
NJB «համոզվե՛ք»

Սա ներկա ժամանակի ներգործական սեռի հրամայական եղանակ է: Քրիստոնյաները պետք է շարունակեն հսկել Քրիստոսում իրենց ունեցած ազատությունը սուտ վարդապետներից, մինչդեռ կգիջեն այն ավելի թույլ եղբայրներին (տես՝ Հռոմ. 14:1-15:13; 1 Կորնթ. 8; 10:23-33): Հաճախ դժվար է ասել այս երկու խմբերի միջև տարբերությունը: Սուտ վարդապետները աղավաղում են ճշմարտությունը, մինչ տկար եղբայրները պաշտպանում են անձնական նախընտրությունները:

❖ «**չլինի թե մեկը ձեզ գերի դարձնի**» Սա ներկա ժամանակի ժխտական ներգործական սեռի դերբայ է: Հունարեն այս խիստ տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում, նշանակել (1) առևանգել, (2) մոլորեցնել (2 Տիմ. 3:6) կամ (3) գերի վերցնել: Սուտ վարդապետները միշտ ուզում են վերահսկել:

❖ «**փիլիսոփայությամբ**» Սա չի դատապարտում մարդու բանական մտայնությունը: Մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով և պետք է երկրպագեն Նրան իրենց ամբողջ էությանը՝ ներառյալ միտքը (2 Օրինաց 6:5; Մատթ. 22:32; Մարկոս 12:29-30; Դուկ. 10:27): Սա մերժում է սուտ վարդապետների սպեկուլյատիվ փիլիսոփայությունը, աստվածաբանությունը (տես՝ Կող. 2:23; 1 Կորնթ. 1:26-2:8; Եփես. 4:13; 5:6; 1 Տիմ. 6:20):

❖ «**դատարկ խաբեությամբ**» Այս տերմինը կարող է թարգմանվել «խաբեություն, խորամանկություն կամ խաբկանք» (տես՝ Մատթ. 13:22; Եփես. 4:22; 2 Թեսաղ. 2:10; Եբր. 3:13): Սուտ վարդապետները հաճախ անկեղծ են, սակայն խաբված:

❖ «**հիմնված են**» Սա հունարենի *kata* տերմինն է: Այն կրկնվում է երեք անգամ, սահմանելու «փիլիսոփայությունը և դատարկ խաբեությունը»:

1. «**մարդկային ավանդույթների վրա**» Մարդկանց կրոնավորության մեծ մասը մշակութային է և ոչ թե սուրբգրային (տես՝ Եսայի 29:13; Կող. 2:23): Հաճախ մենք փոխանցում ենք այն ինչ ստացել ենք, առանց ինքներս Աստվածաշնչով ստուգելու:
2. «**ոչ թե Քրիստոսի**» Այն հիմնված է մարդկային բանականության, փորձառության կամ մտահղացման վրա:
3. «**աշխարհի սկզբունքների վրա**» Շատ խոսքեր ձևավորվում են տառացի, ֆիզիկական իմաստից մինչև փոխաբերական հարթության վրա: Այս տերմինը (*stoicheia*) սկզբնապես վերաբերում էր շարքի մեջ գտնվող ինչ որ բանի: Այն կատարելագործվելով ստացավ մի քանի նշանակություն՝
 - ա. երկրագնդի կազմության հիմնական ֆիզիկական տարրերը (օդ, ջուր, հող և կրակ, տես՝ 2 Դեո. 3:10,12):
 - բ. առարկայի հիմնական ուսմունքները (տես՝ Եբր. 5:12; 6:1 Հուդայականության համար):
 - գ. Հրեշտակների երկնային մարմիններում ունեցած գորությունները (տես՝ 1 Ենովք 52:8-9, վաղ շրջանի եկեղեցու հայրերը, Կող. 2:8,20; 1 Կորնթ. 15:24) կամ գնոստիկ սուտ վարդապետների հրեշտակային կարգերը (*aeons*) (տես՝ Կող. 2:10,15; Եփես. 3:10):

դ. Մարդկության հանդեպ թշնամացած հրեշտակները, որոնք փորձում էին խափանել Մովսեսին Օրենքի հանձնումը (տես՝ Գործք 7:38; Եբր. 2:2):

ե. Հավանաբար ընկած աշխարհի ոչանձնային կառույցները, որոնք թույլ են տալիս մեղավոր մարդկությանը Աստծուց անկախ ձևանալու (կրթությունը, կառավարությունը, բժշկությունը, կրոնը, և այլն. տես՝ Գաղ. 4:3, 8-9 և Հենրիկ Բերխովի *Քրիստոսը և Իշխանությունները* Հերալդ Հրատարակչության, էջ. 32):

❖ **«և ոչ թե Քրիստոսի»** Սա *kata* տերմինի երրորդ գործածությունն է: Աշխարհի փիլիսոփայության հետ խնդիրն այն է, որ այն ճշմարտությունը սահմանում է համաձայն ինչ-որ չափանիշի, բայց ոչ թե Աստծո հայտնությամբ, Հիսուսի Քրիստոսի Ավետարանով: Այն մարդկային հայտնագործություն է և ոչ թե աստվածային հայտնություն:

2:9 «Նրա մեջ» Այս արտահայտությունը ընդգծված տեղում է: «Նրա մեջ» արտահայտությունը Պողոսի աստվածաբանության մեջ բանալի խոսք է («Ում մեջ» Կող. 2:3, «Քրիստոսի մեջ» Կող. 2:5, «Նրա մեջ» Կող. 2:6,9,10,11, «Նրա հետ» Կող. 2:12,13): Ուշադրություն դարձրե՛ք նաև Եփես. 1:3,4, 7,9,10,12,13,14: Պողոսը կրկին վերադառնում է Քրիստոսի գիտության, ինչպես նա արեց Կող. 1:15-20-ում: Սա է կարևորը և այն անձ է:

❖ **«Աստվածության ամբողջ լիությունը»** Քրիստոսի էության այս երկակի առանձնահատկությունը հերքվում էր սուտ վարդապետների կողմից (տես՝ Կող. 1:15-20): Նրանք համաձայն էին, որ Քրիստոսը կատարյալ Աստված էր, սակայն չէին ընդունում, որ կատարյալ մարդ էր (տես՝ 1 Հովհ. 1 և 4:1-3): «Լիություն» (*plerōma*) տերմինը գնոստիկ տերմին էր բարձրյալ աստծո և չար մատերիայի միջև գտնվող հրեշտակային կարգերի (*աէոնների*) համար (տես՝ Հովհ. 1:16; Կող. 1:19, Եփես. 1:23, 3:19, 4:13):

«Աստվածություն» բառի համար օգտագործվող այս արտահայտությունը տերմինը (*theotās*) կիրառվում է ՆԿ-ում միայն այստեղ: Հիսուսը Աստծո կատարյալ և յիարժեք հայտնությունն է, ոչ թե հրեշտակային կարգերը (*աէոնները*) կամ սուտ վարդապետների ծածուկ գիտությունը: Հնարավոր է, որ սա հանդիսացել է գնոստիկ վարդապետների կարևոր տերմիններից մեկը: Պողոսը հաճախ է Քրիստոսին նկարագրելիս կիրառում գնոստիկների տերմինաբանությունը:

❖ **«բնակվում»** Սա ներկա ժամանակի ներգործական (հայերենում՝ կրավորական) սեռի սահմանական եղանակ է: Գնոստիկ սուտ վարդապետներից ոմանք հավատում էին, որ «Քրիստոսի հոգին» իջավ Հիսուսի վրա ինչ-որ սահմանափակ ժամանակով: Այս համարը հաստատում է, որ Հիսուսի երկու բնությունները մշտապես իրար հետ էին՝ միաբան:

❖ **«մարմնապես»** Սա մի ճշմարտություն էր, որ գնոստիցիզմը չէր կարողանում հաստատել բարի աստծո և չար մատերիայի միջև առկա իրենց հունական դուալիզմի պատճառով: Քրիստոնության մեջ սա շատ կարևոր է (տես՝ 1 Հովհ. 4:1-3):

2:10 «դուք կատարյալ եք Նրանում» Անգլերեն թարգմանության մեջ սա *plerōma* տերմինի վաղա-կատար կրավորական դերբայն է (տես՝ Կող. 2:9; Հովհ. 1:16; Եփես. 3:19): Քրիստոնյան լցվել է և շարունակում է լցվել Նրանով և Նրա համար: Հիսուսը մեզ կատարյալ դարձրեց:

❖ **«Ով գլուխն է ամեն իշխանության և պետության»** Սա վերաբերում է գնոստիկ սուտ վարդապետների փրկության մասին ունեցած տեսակետին: Նրանց համար փրկությունը ծածուկ գիտության (ծածկագիր կամ ծածուկ անուն) մեջ էր, որը թույլ էր տալիս իրենց շարժվելու հրեշտակային ոլորտների միջով՝ մատերիայի (աշխարհի) և հոգու (Աստծո, տես՝ Կող. 1:16; 2:15; Եփես. 1:22-23; 3:10; 6:12) միջև: Պողոսը հաստատում էր, որ փրկությունը Քրիստոսի մեջ է: Նա է բոլոր հրեշտակային/ դիվական իշխանությունների գլուխը (տես՝ Հռոմ. 8:38-39): Տես՝ Հատուկ Թեմա. Հրեշտակները Պողոսի Թղթերում, Եփես. 6:12-ում:

Չորջ Լեդդի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* (George Ladd *A Theology of the New Testament*) գրքում կա մի հետաքրքիր պարբերություն Պողոսի տերմինաբանության վերաբերյալ.

«Այս հրեշտակային հոգիներին բնութագրող Պողոսի կիրառած լեզվի ուսումնասիրությունը բացահայտում է, որ Պողոսը դիտավորյալ կերպով գործածում էր անորոշ ու իրարից տարբերվող տերմինաբանություն: Սա հատկապես ակնհայտ է իր կիրառած մի քանի բառերի եզակի և հոգնակի ձևերի տարբերությամբ: Անհնարին է այս տերմինաբանությունը բարեհաջող կերպով խմբավորելու հստակ որոշված հրեշտակային էակաների կարգի մեջ, ոչ էլ ընդհանրապես հստակ են այն բառերը, որով Պողոսը դիտավորյալ նկարագրում է հրեշտակների տարբեր տեսակները կամ կարգերը: Հավանաբար Պողոսը բախվում էր այնպիսի տեսակետների հետ, որոնք մշակել էին հրեշտակների զանազան կարգեր, իսկ նա նպատակ էր դրել իր չափազանց ճկուն լեզվի միջոցով, որը կարելի է նույնիսկ համարել սիմվոլիկ լեզու, հաստատել, որ բոլոր չար իշխանությունները՝ ինչ էլ որ դրանք լինեն, անձ հանդիսացող կամ չհանդիսացող, հնազանդեցվել են Քրիստոսի մահվամբ և մեծարմամբ, և ի վերջո բնաջնջվելու են Նրա մեսիական թագավորության միջոցով» (էջ՝ 402):

«Իշխանություն» բառի համար տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:16-ում:

2:11 «դուք էլ թլփատվեցիք թլփատությամբ» Պողոսը կիրառում է ԿՀ-յան ուխտի նշանը (տես՝ Ծննդ. 12:8-14) իր հոգևոր նշանակությամբ (տես՝ 2 Օրինաց 10:16; 30:6; Երեմ. 4:4; Հռոմ. 2:28-29; Փիլ. 3:3): Սա պետք է որ այլաբանական լեզու լիներ կամ էլ սուտ վարդապետներն ունեին որոշ հուդայական հակումներ: Այնքան բան կա, որ անհայտ է ՆԿ-յան հերձվածող խմբերի վերաբերյալ: Ինչ-որ առումով այս սուտ վարդապետները հունական գնոստիցիզմի և հրեական օրինապահության համադրություն են (տես՝ Կող. 2:11, 16, 18): Լայթֆութ անունով մեկնաբանը հայտարարում է, որ նրանք Էսսենների (Մեռյալ Ծովի Գալարների համայնքը, որոնք անապատում ապրող առաջին դարի աղանդավոր հրեաներից կազմված բաժանություն զգող խմբավորում էին):

❖ **«անձեռագործ թլփատությամբ»** Այստեղ թլփատությունը կիրառված է փոխաբերական իմաստով, որպես ՀԿ-ի ուխտի նշան: «Նոր» թլփատությունը նոր սիրտն է և Աստծո հետ Քրիստոսի միջոցով նոր փոխհարաբերությունը (տես՝ Հռոմ. 2:28-29; Փիլ. 3:3): Նույնիսկ ՀԿ-ում, երբ քննարկվում էր նոր ուխտը (տես՝ Երեմ. 31:31-34 և Եզեկ. 36:22-38), թլփատությունը երբեք չէր նշվում, առավել ևս շեշտադրվում:

❖ **«մի կողմ դնելով մեղքերի մարմնավոր մարմինը»** Սա վերաբերում է հին մեղավոր բնությանը, և ոչ թե ֆիզիկական մարմնին (տես՝ Հռոմ. 6:6; 7:24; Գաղ. 5:24; Կող. 3:5):

2:12 «թաղվելով Նրա հետ մկրտության մեջ» Սա *syn* բաղադրյալի անորոշ կատարյալ կրավորական դերբայ է, որը նշանակում է «միասին թաղված»: Սա մկրտության փոխաբերությունն է, քանի որ ընկմվելը նման է թաղվելուն (տես՝ Հռոմ. 6:4): Հավատացյալները բաժնեկից լինելով Հիսուսի չարչարանքներին, մահվանը և թաղմանը, նրանք նաև բաժնեկից են լինելու Նրա հարությանն ու փառքին (տես՝ Կող. 2:12բ; Հռոմ. 8:17; Եփես. 2:5-6):

Պողոսի համար մկրտությունը հին կյանքի (հին մարդու) մահը և նոր կյանքի (նոր արարածի, տես՝ 2 Կորնթ. 5:17; Գաղ. 6:15) ազատությունը հաստատելու մի կերպ է, որպեսզի նոր մարդը ծառայի Աստծուն (տես՝ Հռոմ. 6:2-14; 1 Պետ. 2:24):

❖ **«նաև հարություն առաք Նրա հետ»** *Syn* արմատի կազմությամբ այս բաղադրյալը համագործ է «թաղվելով» խոսքին (տես՝ Կող. 2:13; 3:1; Հռոմ. 6:4-5; Եփես. 2:6): Հավատացյալների թաղումը և հարությունը փոխկապակցված են ինչպես մի ամբողջական իրադարձության երկու կողմեր: Նրանք «միասին թաղվեցին» և «միասին հարություն առան» Եփես. 2:5-6-ում, նույնպես կիրառում է *syn* բաղադրյալները, որը նշանակում էր «համամասնակցից . . . հետ»:

❖ **«Նրան հարություն տվեց մեռելներից»** Հիսուսը Հարության առաջին պտուղն է (տես՝ 1 Կորնթ .15:20,23): Հոգին, որ հարություն տվեց Նրան, նաև հարություն է տալու հավատացյալներին (տես՝ Հռոմ .8:10-11,23):

Այս արտահայտությունը գերազանց հնարավորություն է ցույց տալու, որ ՆԿ-ը հաճախ փրկության գործը վերագրում է Աստվածության բոլոր երեք անձերին.

1. Հայրը Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես՝ Գործք 2:24; 3:15; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ .6:4,9)
2. Որդի Աստվածն Ինքն իրեն հարություն տվեց (տես՝ Հովհ .2:19-22; 10:17-18)
3. Սուրբ Հոգի Աստվածը հարություն տվեց Հիսուսին (տես՝ Հռոմ .8:11)

Այս նույն Երրորդության շեշտադրումը կարելի է տեսնել Կող .2:9-10-ում:

2:13 «որ մի ժամանակ մեռած էիր» Սա ներկա ժամանակի դերբայ է, որը նշանակում է «լինելով մեռած»: Սա արտացոլում է Անկման հետևանքը՝ հոգևոր մահը (տես՝ Ծննդ .3; Հռոմ .5:12-21; Եփես .2:1-3): Հեթանոսները ուխտի ժողովրդից կտրված մեղավորներ էին (տես՝ Եփես .2:11-12): Աստվածաշունչը խոսում է մահվան երեք փուլերի մասին՝

1. հոգևոր մահ (տես՝ Ծննդոց 3, Ես .59:2; Հռոմ .7:10-11, Եփես .2:1, Հակ .1:15):
2. ֆիզիկական մահ (տես՝ Ծննդոց 5)
3. հավիտենական մահ, «երկրորդ մահը», «կրակի լիճը» (տես՝ Հայտն .2:11; 20:6,14; 21:8)

❖ **«ձեր մարմնավոր անթլփատությունը»** Սա հեթանոսներին նկատի ունենալու մի ձև էր (տես՝ Կող .2:11):

❖ **«Նա /կենդանացրեց/»** Սա պետք է որ վերաբերի Հորը: Եթե այդպես է, ուրեմն մինչև Կող .2:15 այս դերանունը վերաբերում է Հայր Աստծուն:

❖ **«կենդանացրեց Նրա հետ»** Կող .2:12-13-ում առկա են երեք *syn* բաղադրյալներ (միասին թաղվեցիք՝ Կող .2:12, միասին հարություն առաք՝ Կող .2:12, միասին կենդանացաք՝ Կող .2:13), որը ցույց է տալիս այն, ինչ արդեն հոգևորապես տեղի էր ունեցել հավատացյալների հետ (անորոշ կատարյալներ): Սա շատ նման է Եփես .2:5-6-ին: Եփեսացիներում Աստված գործել է Հիսուսի համար՝ Եփես .1:20-ում, իսկ Հիսուսը գործել է հավատացյալների համար Եփես .2:5-6-ում:

❖ **«ներելով մեր բոլոր հանցանքները»** Սա անորոշ կատարյալ ժամանակի (դեպոնենտ՝ աորիստ) չեզոք սեռի դերբայ է: «Ներել» բառը միևնույն «շնորհք» արմատից է սերվել (տես՝ Հռոմ .5:15,16; 6:23; 2 Կորնթ .1:11; Կող .3:13; Եփես .4:32): Ուշադրություն դարձրեք, որ Աստված ձրի ներում է «բոլոր» մեղքերը Զրիստոսի միջոցով (բացի անհավատությունը):

2:14

**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

**«պարտամուրհակը չեղարկելով»
«պարտավորությունների ձեռագրերը ջնջելով»
«ջնջելով արձանագրությունը»
«մեր պարտքերի անբարեհաջող արձանագրությունը չեղարկելով»
«Նա ջնջեց Օրենքի հանդեպ մեր ունեցած պարտքի արձանագրությունը»**

Սա ավելի շուտ ծածուկ լեզու է, հավանաբար ինչ-որ տեղ կապված սուտ վարդապետների հետ: Այն վերաբերում է Մովսիսական Ուխտին (տես՝ Եփես .2:15, որը կարելի է բնորոշել որպես «կատարիր և ապրիր», «մեղանչիր և մեռիր» /տես՝ 2 Օրինաց 27:26; Եզեկ .18:4/): Պողոսը հստակ սովորեցնում է ամբողջ մարդկության մեղսալիության մասին (տես՝ Հռոմ .3:9,19,13, 11:32, Գաղ .3:22): Հետևաբար, ՀԿ-ը ամբողջ մարդկության համար դարձավ մահապատիժ:

«Մուրհակ» տերմինը կիրառվում էր (1) ստորագրված պարտամուրհակի համար, (2) ստորագրված խոստովանության համար, և (3) ստորագրված մեղադրական եզրակացության համար: ՀԿ-ը անեծք էր: Այս հունարեն տերմինը անգլերենի մեջ է սերվել որպես «autograph» (ինքնագիր):

❖ **«Նա մեջտեղից վերացրեց»** Մա վաղակատար ժամանակ ներգործական սեռ սահմանական եղանակ է: Մինևույն բայը գործածվում է Հովհ. 1:29-ում և 1 Հովհ. 3:5-ում՝ նկատի ունենալով մեղքերի թողությունը: Հիսուսն ապրեց Մովսիսական ուխտի պահանջների ներքո և դրանք կատարեց: Նա արեց այն, ինչ չկարողացավ անել մեղավոր և ընկած մարդկությունը: Ուստի, Նրա մահը անձնական մեղքերի համար չէր, այլ Նա եղավ մեղքի համար կատարյալ գոհը (տես՝ Դևտացիների 1-7): Նա «անհիծվեց» (տես՝ 2 Օր. 21:23), որպեսզի մարդկությունը կարողանա ազատվի Օրենքի անեծքից (տես՝ Գաղ. 3:13):

❖ **«խաչափայտին գամելով»** Մա վերաբերում է կա՛մ (1) հրապարակային ուշադրությանը կա՛մ էլ (2) այն մեղադրանքներին, որ դրվել էր խաչվողի վրա: Իսաչը (Հիսուսի մահը) հաղթեց թշնամությանը (ՀԿ-ի կանոններին, տես՝ 2 Կորնթ. 5:21):

2:15

NASB, NKJV, NRSV
TEV
NJB

«զինաթափելով»
«ազատելով»
«մերկացնելով»

Մա հազվադեպ մի տերմին է՝ անորոշ կատարյալ ժամանակի չեզոք սեռի (դեպոնենտ) դերբայ: Դրա հիմնական ստուգաբանությունն է հազուստը հանելը: Այն կարծես թե նշանակում է «մերկացնել ինչ-որ բանից»: Այն վերաբերում էր մեռած զինվորների վրայից զենքերը վերցնելուն (տես՝ Արնթ և Գինգրիչ, *Նոր Կտակարանի հույն-անգլերեն բառապաշարը և այլ վիտ Քրիստոնեական գրականություն*, էջ՝ 82 /Arndt and Gingrich, *A Greek-English Lexicon of the New Testament and Other Early Christian Literature*, p.82/): Այս համատեքստում այն վերաբերում է աստվածության (Հոր և Որդու) կողմից այն հոգևոր իշխանության կործանումը, որը թշնամի էր մարդկությանը: Հավատացյալի հաղթությունը Աստծուց է՝ Քրիստոսի և Հոգու միջոցով:

Եթե այս հազվադեպ բայը թարգմանվում է չեզոք սեռի տեսքով, ապա TEV թարգմանությունը արտահայտում է «ազատեց իրեն հոգևոր իշխանների զորությունից» միտքը: Եթե թարգմանվում է որպես ներգործական սեռի բայ, ապա՝ «Նա մերկացրեց իշխաններին» (տես՝ NASB, NKJV, NRSV):

❖ **«իշխանություններին և պետություններին»** Այս տերմինները կիրառում էին գնոստիկները (սուտ վարդապետները) հրեշտակային կարգերի համար (*աեռններ*, տես՝ Կող. 2:10, Եփես. 1:21, 3:10, 6:11-12, Հռոմ. 8:38-39, 1 Կորնթ. 15:24): Տե՛ս Հատուկ Թեմա Կող. 1:16 և Եփես. 6:12-ում:

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«Նա հրապարակավ խայտառակեց և Նրանով հաղթանակ տարավ նրանց վրա»
«Նա հրապարակավ ամոթով թողեց նրանց՝ դրանում հաղթելով նրանց»
«Նա հրապարակավ նրանց օրինակը ցույց տվեց՝ դրանում հաղթելով նրանց»
«Նա հրապարակավ խայտառակեց նրանց՝ որպես գերիներ ի ցույց դնելով իր հաղթական շքերթում»
«և հրապարակավ շքերթի հանեց նրանց՝ տանելով Իր ետևից հաղթական շքերթում»

Այս խոսքի պատմական հիմք է հանդիսանում հաղթող զեներալի հաղթական շքերթով Հռոմ մտնելը (տես՝ 2 Կորնթ. 2:14): Շղթայակապ գերիները քայլելով հետևում էին նրան: Իսաչի վրա Իր մահվամբ և Իր հարությանը Հիսուսը հաղթեց (1) Օրենքի անեծքին և (2) թշնամի հրեշտակների զորություններին՝ իշխանություններին:

Քանի որ ժամանակակից թարգմանություններից ակնհայտ է, որ այս խոսքի վերջում գրված դերանունը կարելի հասկանալ երկու փոխկապակցված կերպով՝ (1) Քրիստոսի վերաբերող կամ էլ (2) իսպին: Այն չեզոք է և թարգմանությունների մեծ մասը նկատի է ունենում չարի հանդեպ Քրիստոսի հաղթանակը՝ զոհաբերության մահվամբ:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՏԵՐԱԶՄ ԵՐԿՆՔՈՒՄ (Հայտնություն 12:7-9-ից)
SPECIAL TOPIC: WAR IN HEAVEN (from Revelation 12:7-9)**

Այս ընդհարման տարեթվի շուրջ շատ քննարկումներ են եղել: Հիսուսը կարծես թե այս դեպքի մասին նշում է Ղուկաս 10:18 և Հովհաննես 12:31-ում: Սակայն չափազանց դժվար է փորձել որոշել այս իրադարձության ժամանակագրական տարեթիվը՝

1. նախքան Ծննդոց 1:1 (նախքան արարումը)
2. Ծննդոց 1:1-ի և 1:2-ի միջև (միջանկյալ տեսությունը)
3. ՀԿ-ում Հոր 1-2-ից հետո (Սատանան երկնքում)
4. ՀԿ-ում 3 Թագ. 22:21-ից հետո (Սատանան երկնային ժողովքում)
5. ՀԿ-ում Չաքարիա 3-ից հետո (Սատանան երկնքում)
6. ՀԿ-ում ինչպես Ես. 14:12, Եզեկ. 28:15 և 2 Ենովքի 29:4-5-ում (Արևելքի թագավորները դատապարտվում են)
7. ՆԿ-ում Հիսուսի փորձությունից հետո (տես՝ Մատթեոս 4)
8. ՆԿ-ում յոթանասուն աշակերտների առաքելության ընթացքում (տեսա, որ Սատանան ընկնում է Երկնքից, տես՝ Ղուկ. 10:18)
9. ՆԿ-ում՝ Երուսաղեմ հաղթական մուտքից հետո (այս աշխարհի իշխանը դուրս նետվեց, տես՝ Հովհ. 12:31)
10. ՆԿ-ում Հիսուսի հարությունից և համբարձումից հետո (տես՝ Եփես. 4:8, Կող. 2:15)
11. վերջին ժամանակներում (տես՝ Հայտն. 12:7, հավանաբար, երբ Սատանան ներխուժեց երկինք Մանկանը փնտրելու)

Մենք պետք է պարզապես սա դիտարկենք որպես հավիտենական պատերազմ Աստծո և չարի գործի միջև. այս հակամարտությունը իր վախճանին կհասնի վիշապի և նրա գործի կատարյալ պարտության ժամանակ: Հայտնություն 20-ում նրանք հեռացվում են և մեկուսացվում: Տե՛ս Հատուկ Թեմա. Սատանայի և նրա հրեշտակների անկումը (Հայտն. 12:4):

❖ «հրապարակավ խայտառակեց» Տե՛ս ստորև ներկայացված Հատուկ Թեմայի երկրորդ պարբերությունը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԱՐԶԱԿՈՒԹՅՈՒՆ (PARRHĒSIA)
SPECIAL TOPIC: BOLDNESS (PARRHĒSIA)**

Այս տերմինի հունարեն տարբերակը բաղադրյալ բառ է կազմված՝ «բոլոր» (*pan*) և «խոսք» (*rhēsis*) բառերից: Խոսքի այս ազատությունը կամ համարձակությունը հաճախ ուներ երկրորդ նշանակությունը՝ համարձակություն հակառակության կամ մերժվածության միջավայրում (տես՝ Հովհ. 10:24, 1 Թեսաղ. 2:2):

Հովհաննեսի գրքերում (գործածված է 13) այն հաճախ արտահայտում է հանրային հայտարարություն (տես՝ Հովհ 7:4, նաև Պողոսի թղթերում՝ Կող. 2:15): Սակայն երբեմն այն պարզապես կարող է նշանակել «պարզորեն» (տես՝ Հովհ. 10:24, 11:14, 16:25, 29):

Գործքում Առաքյալները Հիսուսի մասին խոսում էին այնպես (համարձակությամբ), ինչպես որ Հիսուսն էր խոսում Հոր մասին, Իր ծրագրերի և խոստումների մասին (տես՝ Գործք 2:29, 4:13, 29, 31, 9:27-28, 13:46, 14:3, 18:26, 19:8, 26:26, 28:31): Պողոսը նաև խնդրում էր, որ աղոթեն

ավետարանը համարձակությամբ քարոզելու (տես՝ Եփես.6:19, 1 Թեսաղ.2:2) և ավետարանը ապրելու համար (տես՝ Փիլ.1:20):

Հանդերձյալ կյանքի համար հույսը, որ Պողոսն ուներ Քրիստոսի մեջ, նրան համարձակություն և վստահություն էր տվել այս չար ժամանակներում ավետարանը քարոզելու (տես՝ 2 Կորնթ. 3:11-12): Նա նաև վստահություն ուներ, որ Հիսուսի հետևորդները արժանավայել կերպով կապրեն (տես՝ 2 Կորնթ.7:4):

Այս տերմինն ունի ևս մի կողմ: Երբայեցիները այն կիրառում էին Քրիստոսի մեջ ուենցած համարձակության բացառիկ իմաստով՝ Աստծուն մոտենալու և Նրա հետ խոսելու համար (տես՝ Եբր.3:6, 4:16, 10:19,35): Հավատացյալները կատարելապես հրավիրված և ընդունված են Որդու միջոցով Հոր հետ մտերմիկ հարաբերության:

ՆԿ-ում այն կիրառվում է մի քանի կերպ՝

1. վստահության, համարձակության կամ քաջության իմաստով, կապված՝
ա. մարդկանց հետ (տես՝ Գործք 2:29, 4:13,31, 2 Կորնթ.3:12, Եփես.6:19)
բ. Աստծո հետ (տես՝ 1 Հովհ.2:28, 3:21, 4:12, 5:14, Եբր.3:6, 4:16, 10:19)
2. հստակ, պարզ կամ միանշանակ խոսելու իմաստով (տես՝ Մարկ.8:32, Հովհ.7:4,13, 10:24, 11:14, 16:25, Գործք 28:31)
3. հրապարակավ՝ բացահայտ խոսելու իմաստով (տես՝ Հովհ.7:26, 11:54, 18:20)
4. նմանատիպ բառ (*parrhēsiāzomai*) կիրառվում է դժվար կացություններում համարձակությամբ քարոզելու դեպքում (տես՝ Գործք 18:26, 19:8, Եփես.6:20, 1 Թեսաղ.2:2):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՍՏՅԻՆԵՐԻ 2:16-19

¹⁶Այսուհետև թող ոչ որ չդատի ձեզ ուտելու և խմելու համար, կամ տոների, ամսագլուխների և շաբաթների համար. ¹⁷որոնք գալիք բաների սովերն են, բայց մարմինը Քրիստոսինն է: ¹⁸Թող ոչ որ ձեզ չզրկի մրցանակից՝ ինքնական նվաստացմամբ և հրեշտակների պաշտամունքով, միջամուխ լինելով այնպիսի բաների, որ չի տեսել՝ իր մարմնավոր մտքով գուր տեղը հպարտանալով, ¹⁹կորցրել է կապը Գլխի հետ, որից ամբողջ մարմինը հողերով և հողակապերով հաղորդված և միահյուսված՝ աճում է Աստծո աճումով:

2:16-23 Պողոսի թղթերում 16-23 համարները ամենախիստ դատապարտումն են կրոնական օրինապաշտությանը: Երբ Պողոսը գործ էր ունենում «տկար» հավատացյալների հետ, նա մեղմ էր (տես՝ Հռոմ. 14:1-15:13, 1 Կորնթ. 8-10), բայց երբ դիմում էր կրոնավոր՝ իրենց արդար կարծող օրինապաշտներին (այսինքն՝ սուտ վարդապետներին)՝ նա անզիջում էր: Այս ինքնաարդարացումը հենց այն էր, ինչի պատճառով մեծ դատապարտության արժանացան Հիսուսի կողմից Փարիսեցիներն ու Սադուկեցիները: Պողոսը գիտեր, թե ինչ է նշանակում բարի գործերի վրա կենտրոնացած կրոնը: Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ իր հանդիպումը (տես՝ Գործք 9) փոխեց ամեն ինչ:

Գոյություն ունեին գնոստիկ սուտ վարդապետների երկու տեսակ՝ (1) փրկությունը ծածուկ գիտության միջոցով է, և հետևաբար կապ չունի, թե դու ինչպես ես ապրում (անտիոնմիական ազատականներ) և (2) փրկությունը ծածուկ գիտության միջոցով և ավելացրած՝ շատ խիստ ապրելակերպ (օրինապաշտները):

2:16

NASB

NKJV

NRSV

TEV

NJB

«թող ոչ որ չվարվի ձեր հետ ինչպես դատավոր»

«թող ոչ որ չդատի ձեզ»

«թույլ մի՛ տվեք որևէ մեկը դատապարտի ձեզ»

«թող ոչ որ կանոններ չդնի»

«երբեք թույլ մի տվեք, որ ձեզ քննադատեն»

Սա ներկա ժամանակի հրամայական եղանակ է՝ ժխտական հոդով, որը նշանակում էր դադարել վարվել արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործողության համաձայն: Սա վերաբերում էր (1) ուտելիքի հետ կապված հարցերին (տես՝ 1 Տիմ. 4:3), (2) հատուկ օրերին (տես՝ Հռոմ. 14:5, Գաղ. 4:10), կամ (3) հրեշտակների կարգերի պաշտամունքին (տես՝ Կող. 2:8,20): Ակնհայտ զուգահեռներ կան Կող. 2:16-ի («վարվի ինչպես ձեր դատավորը») և Կող. 2:18-ի (վարվի ինչպես «մրցավար»): Զգուշացե՛ք կրոնական օրինապաշտությունից, լինի դա հրեական, հունական թե՛ ժամանակակից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՍՏԱՆԸ ՆԿ-ՈՒՄ
SPECIAL TOPIC: JUDGMENT IN THE NT

Աստծո դատաստանը հաստատ է (տես՝ Մատթ. 12:36, Եբր. 9:27, 10:27, 2 Պետ. 2:4,9, 3:7):

Ա. Միակը, որ կարող է դատել (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐԸ, ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐ-ԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՍԱՅԻ ԳՐՔՈՒՄ)

1. Աստված է (տես՝ Հռոմ. 2:2-3, 14:10,12, 1 Պետ. 1:17, 2:23, Հայտն. 20:11-15)
2. Քրիստոսն է (տես՝ Հովհ. 9:39, Մատթ. 16:27, 25:31-46, Գործք. 10:42, 17:31,2 Կորնթ. 5:10, 2 Տիմ. 4:1)
3. Հայրն է Որդու միջոցով (տես՝ Հովհ. 5:22-27, Գործք. 17:31, Հռոմ. 2:16)

Բ. Դատաստանը տհաճ, սակայն Աստվածաշնչում պարբերաբար կրկնվող թեմա է: Այն հիմնված է աստվածաշնչյան մի քանի հիմքերի վրա:

1. Սա բարոյական տիեզերք է՝ արարված բարոյական Աստծո կողմից (հնձում ենք այն, ինչ ցանում ենք, տես՝ Գաղ. 6:7)
2. Մարդկությունը անկում է ապրել. մենք ապստամբել ենք
3. Սա այն աշխարհը չէ, որն Աստված էր մտադիր ունենալ
4. Բոլոր գիտակից արարածները (հրեշտակներն ու մարդիկ) կյանքի պարզևի համար իրենց Արարչին հաշվետու են լինելու: Մենք տնտեսներ ենք:
5. Հավիտենությունը մշտապես որոշվելու է մեր գործողություններով և որոշումներով, որոնք կայացնում ենք այս կյանքում:

Գ. Պետք է արդյո՞ք Քրիստոնյաները իրար դատեն: Այս խնդրին կարելի է երկու կերպ անդրադառնալ՝

1. հավատացյալներին հորդորվում է չդատել միմյանց (տես՝ Մատթ. 7:1-5, Դուկ. 6:37,42, Հռոմ. 2:1-11, Հակ. 4:11-12)
2. հավատացյալներին հորդորվում է գնահատել առաջնորդներին (տես՝ Մատթ. 7:6,15-16, 1 Կորնթ. 14:29, 1 Թեսաղ. 5:21, 1 Տիմ. 3:1-13, և 1 Հովհ. 4:1-6)

Ճիշտ գնահատելու մի քանի չափանիշներ կարող են օգտակար լինել՝

ա. գնահատումը պետք է լինի հաստատելու նպատակով (տես՝ 1 Հովհ. 4:1՝ «փորձեք» արդարացնելու միտումով, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ (Peirazō and Dokimazō):

բ. գնահատումը պետք է կատարվի խոնարհությամբ և հեզությամբ (տես՝ Գաղ. 6:1)

գ. գնահատումը չպետք է կենտրոնանա անձնական նախասիրության խնդիրների վրա (տես՝ Հռոմ. 14:1-23, 1 Կորնթ. 8:1-13, 10:23-33)

դ. գնահատումը պետք է բացահայտի եկեղեցու կամ համայնքի ներսում «քննադատության մասնակից չլինող» առաջնորդներին (տես՝ 1 Տիմոթեոս 3):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԶՐԻՍՏՈՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱԹՈՌԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՏԻԺ

2:17

NASB, NRSV
NKJV
TEV
NJB

**«բայց էությունը պատկանում է Քրիստոսին»
«բայց էությունը Քրիստոսից է»
«իրականությունը Քրիստոսն է»
«իրականությունը Քրիստոսի մարմինն է»**

«Ստվերի» (*skia*, Կող.2:17ա) և «նյութի՝ էության» (*sōma*, բառացի՝ «մարմին», Կող.2:17բ) միջև կա հակադրություն: Կրոնական ծեսերը, բարեպաշտությունը և պաշտամունքի հատուկ օրերը ինքնին վատ չեն, եթե իհարկե դրանք չդառնան նպատակ: Ավետարանը կենտրոնանում է Քրիստոսի և ոչ թե մարդկային գործերի վրա որևէ բնագավառում:

Պողոսը դիտարկում էր սուտ վարդապետների կրոնական ծիսապաշտությունը և պարտադրվող կրոնական գործերը իրական հոգևորության սոսկ ստվեր: Մեկնության համար հարց է առաջանում, թե ի՞նչ նշանակում «Քրիստոսի մարմինը»: Երկու հիմնական տեսություններ են. (1) Ալեքսանդրիացի Ֆիլոն և Հովսեփոսը «մարմինը» մեկնաբանում են «նյութի» (NASB, NKJV) կամ «իրականության» (TEV) իմաստով, «ճշմարիտ հոգևորությունը Քրիստոսում» կամ (2) ճշմարիտ հոգևորությունը արտահայտվում է Եկեղեցում, որը Քրիստոսի մարմինն է (NJB, տես՝ Հռոմ.12:4-5, 1 Կորնթ. 10:17, 12:12,27):

Եբրայեցիների հեղինակը նույնպես օգտագործում է «ստվեր» (*skia*, Կող.2:17ա) տերմինը՝ համեմատելու Մովսիսական ուխտը Քրիստոսում Նոր Ուխտի հետ (տես՝ Եբր. 8:5, 10:1):

2:18

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

**«Թող ոչ ոք ձեզ չզրկի մրցանակից»
«Թող ոչ ոք ձեզ չզրկի պարգևից»
«Թույլ մի՛ տվեք որևէ մեկի որակազրկի ձեզ»
«Թույլ մի՛ տվեք ինքներդ ձեզ, որ որևէ մեկը դատապարտի ձեզ»
«Որևէ մեկը թող խաբելով չզրկի ձեզ մրցանակից»**

Սա ներկա ժամանակի հրամայական եղանակ է ժխտական հոդով, որը նշանակում է դադաևեցնել արդեն իսկ ընթացքում գտնվող գործողությունը: Այս տերմինը ՆԿ-ում օգտագործված է միայն այստեղ: Սա Պողոսի կողմից կիրառվող մարզական փոխաբերություններից մեկն է Քրիստոնեական կյանքը բնութագրելու համար (տես՝ 1 Կորնթ. 9:24, 27, Գաղ. 2:2, Փիլ. 3:14, 2 Տիմ. 4:7): Հավատացյալները պետք է թույլ չտան, որ օրինապաշտները վարվեն իրենց հետ ինչպես մրցավարներ՝ զրկելով իրենց Քրիստոսում ունեցած ազատությունից (տես՝ Հռոմ.14:1-15:13, 1 Կորնթացիների 10-12: ՆԿ-ի Ուիլյամս թարգմանությունը ընդգծելով այս մարզական շեշտադրումը, թարգմանում է «խաբեն ձեզ մրցավարի պես»): «Մրցանակը» Քրիստոսում ճշմարիտ ազատությունն է (տես՝ Գաղ. 2:4, 5:1,13, 1 Պետ. 2:16): Ազատություն Աստծուն ծառայելու համար, ոչ թե ինքներս մեզ: Ազատություն անցյալի վախերից և չի կարելիներից, ազատություն ինչ-որ բաներից և ոչ թե ինչ-որ բաների համար (Հռոմեացիների 6):

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

**«ուրախանալով ինքնական նվաստացմամբ»
«ուրախանալով կեղծ խոնարհությամբ»
«ստիպելով ինքնական նվաստացում»
«կեղծ խոնարհություն ստիպելով»
«ովքեր նախընտրում են երկրպագել հրեշտակներին»**

Այս արտահայտությունը աստվածաբանորեն կապված է Կող.2:23-ի հետ: Հին հունա-հռոմեական աշխարհում ասկետիզմը համարվում էր որպես կրոնական բարեպաշտություն: Սա գնոստիկների ֆիզիկականի թերագնահատման մի մասն էր կազմում: Նրանց համար, և ընդհանրապես հունական մտածելակերպում, մարմինը չար էր: Հետևաբար, մարմնին մերժելը՝ ուրանալը համարվում էր հոգևորություն: Այս տեսակետը դեռևս առկա է եկեղեցում:

Այս հունարեն բառը NASB թարգմանության մեջ թարգմանված է որպես «ինքնական նվաստացում», որը նշանակում է «ցածրացում», «համեստություն», «խոնարհություն» և ՆԿ-ում բացասական տերմին չէ: Պողոսն այս տերմինը կիրառում է Գործք 20:19, Եփես. 4:2, Փիլ. 2:3, Կող. 3:12-ում դրական իմաստով: Շարժառիթն է, որ այս երևույթը դարձնում է հոգևոր շքեղություն:

❖ **«և հրեշտակների պաշտամունքով»** Ակնհայտ է, որ սա վերաբերում է գնոստիկների հրեշտակային կարգերին (տես՝ Կող. 2:8,10,15): Հնարավոր է նաև, որ սա կապված է հրեշտակների տիրակալությանն առնչվող հրեական աստվածաբանական մոլուցքի հետ: Մեր իսկ օրերում «Նոր Դար» շարժումը կարծես թե այս ուղղությունն է բռնել: Հրեշտակները «սպասավոր հոգիներ» են փրկված մարդկանց համար (տես՝ Եբր. 2:14):

❖ **«միջամուխ լինելով»** Այս տերմինը կիրառվում էր Առեղծվածային կրոններում նախաձեռնությունների շուրջ (տես՝ Մուլթոն և Միլիգան, *Նոր Կտակարանի Հունարեն Բառարան*, էջ՝ 206 /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*): Այն վերաբերում է գնոստիկների այսպես կոչված գաղտնի հայտնություններին կամ ծածկագրերին, որոնք իրենց կարծիքով փրկություն էին բերում հրեշտակային ոլորտների միջոցով այնպես, որ հասնում էին բարձրյալ, սուրբ աստծո ներկայությանը:

❖ **«այնպիսի բաների, որ չի տեսել /անգլ՝ տեսիլքների վրա, որ տեսել է/»** Հավանաբար սա վերաբերում է սուտ վարդապետների հատուկ հայտնությունների հայտարարություններին: Քինգ Ջեյմս թարգմանությունը /ինչպես նաև հայերեն թարգմանությունները/ ավելացնում է ժխտական ածանց՝ համարը դարձնելով այն իմաստով, որ նրանք չէին տեսել, սակայն հայտարարում էին, որ իբրև տեսել են: Ինչևէ, սա հետագա դպրական հավելում է κ^2 և D^2 ձեռագրերի վրա: Հնագույն հունարեն ձեռագրերը՝ P⁴⁶, κ^* , A, B և D չունեն ժխտական հոդ: UBS⁴ –ը ավելի կարճ տեքստը գնահատում է որպես “B” (գրեթե հաստատ):

❖ **«գուր տեղը հպարտանալով»** Սա ներկա ժամանակի կրավորական սեռի դերբայ է: Տառացի սա նշանակում է «գուր տեղը իր մեջ ուռած»: Պողոսն այս տերմինը հաճախ է գործածում Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում (տես՝ 1 Կորնթ. 4:6,18,19, 5:2, 8:1, 13:4): Կրավորական սեռ չարտահայտված գործոնը իրենց իսկ խավարած՝ մեղավոր միտքն էր: Անհավատները և սուտ վարդապետները հաճախ անկեղծ են և խանդավառ:

❖ **«իր մարմնավոր մտքով»** Պողոսի համար ակնհայտ երկփեղկվածություն կա մեղավոր աշխարհի և Քրիստոնեական մտածելակերպի միջև: Հավատացյալները ընդունել են Քրիստոսի միտքը, որն ընդհարման մեջ է առանց Աստծո ապրող և գործող աշխարհի մտայնության հետ (տես՝ Կող. 1:21, Հռոմ. 7:22-23, 8:5-7, 11:34, 1 Կորնթ. 2:16, Եփես. 2:3, 4:17-23): Տես Հատուկ Թեմա. Մարմին (sarx), Կող. 1:22-ում:

Այս օրինապաշտ կրոնավորներին պետք է մերժել երեք պատճառով՝

1. նրանց գաղափարները սոսկ իրականության ստվերներ են (Կող. 2:17)
2. նրանց տեսիլքները կեղծ են, քանի որ նրանց տեղեկությամբ է սնում մարմնավոր միտքը (Կող. 2:18)
3. նրանց կապը խզվել է Քրիստոսից (Կող. 2:19):

Օրինապաշտ սուտ վարդապետներ դեռևս մեր մեջ կան, զգուշացե՛ք, եղե՛ք տեղեկացված:

2:19 Պողոսը կրկին շեշտում է մեղավոր մարդկության Քրիստոսի հետ փոխհարաբերության (անհատապես) կարիքը, ինչպես նաև Նրա մարմնի՝ եկեղեցու հետ (հավաքական, տես՝ Կող. 2:8; Եփես. 4:16): Մեզ անհրաժեշտ է մեղքից փրկությունը և Աստծուց իմաստություն, որպեսզի իմանանք, թե ինչպես պետք է ապրենք: Երկուսն էլ ապահովում է Քրիստոսը:

Սա ժխտական ներկա ներգործական բայ է: Ենթադրությունն այն է, որ մի ժամանակ սուտ վարդապետները կապ ունեին Քրիստոսի հետ: Սա կարելի է հասկանալ մի քանի կերպով՝

1. նրանք նման էին Սերմնացանի Առակի միջի երկրորդ տեսակի սերմերին (տես՝ Մատթ. 13:20-23), որոնք ծլեցին, սակայն չորացան և պտուղ չտվեցին
2. նրանք Հովհաննես 8:31-59-ի հավատացյալների պես էին, որոնք Հիսուսին հակառակվեցին
3. եկեղեցու այն անդամների պես էին, որոնք թողեցին հեռացան 1 Հովհ. 2:18-19-ում
4. նրանք Եփեսոսի այն հավատացյալների պես էին, որոնք թողեցին իրենց «առաջին սերը» (տես՝ Հայտն. 2:4):

❖ **«Գլուխը»** Պողոսը հաճախ է գործածում Աստծո ժողովրդի համար անալոգիան որպես մարմին (տես՝ Հռոմ. 12:4; 1 Կորնթ. 10:17; 12:12,14,20; Եփես. 4:4,16; Կող. 3:15), սակայն միայն Եփեսացիների (1:22; 4:15; 5:23) և Կողոսացիների (1:18; 2:19) թղթերում է, որ Քրիստոսը հատկապես նմանեցվում է «Գլխի» (տես՝ Հատուկ Թեմա. Գլուխ, Եփես. 5:23-ում):

Ամբողջ այս համարը խոսում է Քրիստոսի մասին որպես Եկեղեցու անփոխարինելի հիմնադիր, առաջնորդ և մատակարար՝ պահապան:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԿՈՂՈՍԱՍՏՅԻՆԵՐԻ 2:20-3:4
²⁰Ուստի, եթե Քրիստոսի հետ մեռաք այս աշխարհի սկզբունքներին, էլ ինչո՞ւ եք այս աշխարհում կենդանի եղողների պես կանոնների հնազանդվում. ²¹(«Մի՛ մոտեցիր, մի՛ ճաշակիր, մի՛ դիպչիր», ²²որոնք բոլորը գործածվելով փչանում են)՝ մարդկանց պատվիրաններին ու վարդապետություններին հետևելով: ²³Այդ բաները, իրոք, իմաստության տեսքն ունեն՝ կամքի պաշտամունքով, խոնարհությամբ ու մարմնի խստակեցությամբ. սակայն մարմնավոր բավարարությունների դեմ ոչ մի արժեք չունեն: ^{3:1}Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: ²Վերին բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է: ³Որովհետև դուք մեռաք և ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ: ⁴Երբ Քրիստոսը, Որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք:

2:20 «Եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրում է, որ ճիշտ է ըստ հեղինակի տեսակետի կամ իր գրական նպատակների համար: Հավատացյալները միաբան են Քրիստոսի հետ և պետք է անջատվեն՝ հեռանան այս մեղավոր աշխարհի համակարգի կառույցներից:

❖ **«մեռաք /անգլ.՝ մեռել եք/»** Սա անորոշ կատարյալ ներգործական սեռի սահմանական եղանակ է: Այս մահը խորհրդանշվում է մկրտությամբ (տես՝ Կող. 2:12, Հռոմ. 6:4) և հավատացյալի կողմից հին կյանքի համար մեռնելու և Աստծո՝ հավիտենական նոր կյանքի համար հարության պատկերն է: Մկրտությունը թվաատության պես համարվում է ներքին հոգևոր իրականության արտաքին նշան (տես՝ Կող. 2:11,13):

Անձնական փառասիրության և նախասիրությունների ամենօրյա կտրվածքով մահը արդյունավետ ծառայության գրավական է (տես՝ Հռոմ. 6:7; 2 Կորնթ. 5:14-15; 1 Հովհ. 3:16): Սակայն սա կանոններ պահելու լեզվիզմ չէ, այլ մեղավոր անձի բռնակալից ազատություն: Ամենօրյա կտրվածքով անձի հոգևոր մահը տալիս է ճշմարիտ կյանք:

❖ **«Քրիստոսի հետ»** Սա հունարեն *syn* նախածանցի կիրառության մեկ այլ օրինակ է, որը նշանակում է միաբան մասնակցություն: Այս երեք քերականական առանձնահատկությունները՝ (1) *syn* բաղադրյալները, (2) Կող. 2:11,12,13,15,20-ի անորոշ կատարյալ ժամանակները և (3) Կող. 2:20-

ի առաջին կարգի պայմանական նախադասությունը ցույց են տալիս, թե արդեն իսկ ովքեր են հավատացյալները Քրիստոսի մեջ:

NASB	«աշխարհի տարրական սկզբունքներին»
NKJV	«աշխարհի հիմնական սկզբունքներին»
NRSV	«տիեզերքի տարրական հոգիներին»
TEV	«տիեզերքի իշխող հոգիներից»
NJB	«այս աշխարհի սկզբունքներին»

Այս տերմինը (*stoicheia*) սահմանվում է որպես՝

1. հիմնարար սկզբունքներ (տես՝ Եբր. 5:12; 6:1)
2. աշխարհի՝ ինչպես օրինակ հողի, քամու կամ կրակի, հիմնական տարրերը (տես՝ 2 Պետ. 3:10,12)
3. տարրական հոգիներ (տես՝ Գաղ. 4:3, 8-9, Կող. 2:8, Եփես. 6:10-12)
4. երկնային մարմիններ (տես՝ *Ենովք* 52:9-10 և եկեղեցու առաջին հայրերը, որոնք կարծում էին, որ սա վերաբերում էր մոլորակների յոթ ոլորտներին, տես՝ Բաուր, Արնթ, Գինգրիչ, Դանքերի *Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն բառարան*, էջ՝ 776 /Baur, Arnt, Gingrich, Danker's *A Greek-English Lexicon of the New Testament*, p.776/):

Հիմնական ստուգաբանությունն է «ինչ-որ բան հերթի մեջ» կամ «շարք»: Տե՛ս Կող. 2:8-ի գրառումը:

Պողոսը կյանքը դիտարկում էր որպես հոգևոր պայքար (տես՝ Եփես. 2:2-3; 6:10-18): Մարդիկ ներսից պաշարվեցին չարից (անկում ապրած բնույթը, տես՝ Ծննդոց 3), աշխարհի անկում ապրած համակարգի կողմից (տես՝ Ծննդոց 3) և անձնական չարից (Սատանան, դիվականը և *stoicheia*):

Ձեյմս Սթյուրթի *Մարդը Քրիստոսի մեջ*, գրքում մի հետաքրքիր մեկնություն կա՝

«Մեղքը մի բան է, որ մարդն *արեց*. դա մի բան է, որ տիրացավ մարդուն, մի բան, որ մարդն *էր*, մի բան, որը մարդուն վերածեց իրեն սիրող Աստծո բաց թշնամին: Այն իր հետ բերեց արտաքին պատիժներ՝ «ինչ որ մարդ ցանում է, այն էլ հնձում է»: Սակայն դրանից առավել ներքին հետևանքներն էին: Այն տանջահար արեց նրա խղճմտանքը. «Օ, ի՛նչ թշվառ մարդ եմ ես»: Մեղքը մարդու կամքը խղճուկ գերության մեջ գցեց. «բարին, որ ուզում եմ անել՝ չեմ անում, բայց չարը, որ չեմ ուզում անել՝ դա եմ անում»: Այն խափանեց Աստծո հետ փոխհարաբերությունը. «մարդիկ օտարացան», «առանց Աստծո աշխարհում»: Այն կարծրացրեց մարդու սիրտը և կուրացրեց դատողությունը, և աղավաղեց բարոյականության զգացողությունը. «Աստված մատնեց նրանց անարգ մտքերի»: Այն ավիրեց հենց կյանքը. «մեղքի վարձքը մահ է»:

Այսպիսին է առաքյալի կողմից մեղքի անհաղթահարելի ձգողականության գնահատականը: Եվ այս ամեն ինչի միջով, անգամ այնտեղ, որտեղ մեղքը համարվում է որպես արտաքին ուժ, որն սպասում է մարդու էության վրա իր տկարության մեջ իշխանություն վերցնելու, նա թույլ չի տա մարդու անձնական պատասխանատվության փաստի արատավորում՝ պղտորում: Իշխանություններն ու պետությունները կարող են հսկումով սպասել, սակայն ի վերջո մարդն է կատարում ընտրություն, մարդն է պատասխանատու, և մարդու ձեռքերում է դատավճիռը» (էջ՝ 106-107):

«Աշխարհի» համար տես՝ Հատուկ Թեմա. Պողոսի կողմից *Kosmos-ի* կիրառությունը, Կող. 1:6-ում:

❖ **«կանոններ»** Այս տերմինն ունի Կող. 2:14-ում առկա բառի պես միևնույն արմատը: Քրիստոսը հավատացյալներին չի փրկել Մովսիսական Օրենքից, որպեսզի այժմ էլ ներգրավվեն գնոստիկ կանոնների կամ որևէ մարդկային պարտավորությունների մեջ: Օ՛հ, ինչպիսի՛ազատություն ունեն հավատացյալները Քրիստոսում: Օ՛հ, ցավը, որ ունեն լավ նպատակադրված կրոնական օրինապաշտները:

2:21 «Մի՛ մոտեցիր, մի՛ ճաշակիր, մի՛ դիպչիր» Այս շարքը չունի բայեր և կապեր, որը դարձնի նախադասությունը ազդեցիկ: Հնարավոր է սա եղել է սուտ վարդապետների նշանաբանը: Սրանք մարդկային կրոնական օրենքների օրինակներ են, որոնք իրական արդարություն չեն բերում: Մարդիկ մշտապես ունեցել են խստակյաց, օրինապաշտ հսկումներ (տես՝ Եսայի 29:13, Մատթ. 23:23):

15:10-12, Մարկոս 7:19, Հռոմ. 14:17,21), սակայն դա պարզապես մարդկային ջանքերով, փառասիրական և ինքնաբավ փուչ կրոն է (տես՝ Կող. 2:22-23):

2:22 «որոնք բոլորը գործածվելով փչանում են» Մատթ. 15:7-20-ում և Մարկ. 7:6-23-ում Հիսուսը քննարկում է Ղևտացիների 11-ում կերակրի օրենքների հետ կապված նմանատիպ մի խնդիր:

❖ «փչանալ» Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՈՐԾԱՆԵԼ, ԱՎԻՐԵԼ, ՓՉԱՑՆԵԼ (*phtheirō*)
SPECIAL TOPIC: DESTROY, RUIN, CORRUPT (*phtheirō*)

Այս տերմինի *phtheirō* հիմնական իմաստն է կործանել, ավիրել, փչացնել կամ աղավաղել: Այն կարող է գործածվել հետևյալ դեպքերում՝

1. ֆինանսական վնասի (հավանաբար 2 Կորնթ. 7:2)
2. ֆիզիկական բնաջնջման (տես՝ 1 Կորնթ. 3:17ա)
3. բարոյական այլասերման (տես՝ Հռոմ. 1:23, 8:21, 1 Կորնթ. 15:33,42,50, Գաղ. 6:8, Հայտն. 19:2)
4. սեռական գայթակղության (տես՝ 2 Կորնթ. 11:3)
5. հավիտենական կործանման (տես՝ 2 Պետ. 2:12,19)
6. մարդկանց կործանարար սովորույթների (տես՝ Կող. 2:22)

Այս տերմինը հաճախ կիրառվում է նույն համատեքստում ժխտվող հակառակ երևույթի հետ (տես՝ Հռոմ. 1:23, 1 Կորնթ. 9:25, 15:50, 53): Ուշադրություն դարձրե՛ք մեր երկրավոր մարմինների և հավիտենական երկնային մարմինների միջև գուգահեռ հակադրություններին՝

1. եղծանելին ի հակադրություն անեղծանելի, 1 Կորնթ. 15:42, 50
2. անարգանքը ի հակադրություն փառքի, 1 Կորնթ. 15:43
3. տկարությունը ի հակադրություն զորության, 1 Կորնթ. 15:43
4. բնական մարմինը ի հակադրություն հոգևոր մարմնի, 1 Կորնթ. 15:44
5. առաջին Ադամը ի հակադրություն վերջին Ադամի, 1 Կորնթ. 15:45
6. երկրավոր մարմինները ի հակադրություն երկնավոր մարմինների, 1 Կորնթ. 15:49:

2:23 «իմաստության տեսքն ունեն՝ կամքի պաշտամունքով, խոնարհությամբ ու մարմնի խստակեցությամբ» Հիսուսն այս հարցում էր դատում դպիրներին և փարիսեցիներին (տես՝ Ես. 29:13):

Պողոսը սուտ վարդապետների կրոնական գործերը երեք տերմինով է նկարագրում՝

1. **NASB «ինքնաշեն կրոն»**
NKJV «ինքնադրսևորվող կրոն»
NRSV «ինքնադրսևորվող աստվածություն»
TEV «հրեշտակների հարկադրված պաշտամունք»
NJB «կամքի մշակումը»

Այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում: Հնարավոր է, որ այն հորինել է Պողոսը կամ առաջին Բրիտանյաները: NASB-ը կարծես թե որսացել է այս տերմինը իմաստը՝ «ինքնաշեն կրոն»: TEV տարբերակը ենթադրում է, որ այն արտացոլում է Կող. 2:18-ը:

2. **NASB «ինքնանվաստացում»**
NKJV, TEV «կեղծ խոնարհություն»
NRSV «խոնարհություն»
NJB (համադրում է երկրորդ և երրորդ տերմինները)

Հունարեն այս նույն բառը կիրառվում է Կող.2:18-ում: Տառացի այն նշանակում է «խոնարհություն», սակայն համաձայն համատեքստի ավելի հարմար է NKJV և TEV թարգմանությունը:

3. NASB, NRSV, TEV «մարմնի խստակեցություն»

NKJV «մարմնի անտեսում»

NJB «խոնարհություն, որը հաշվի չի առնում մարմինը»

Սա արտացոլում է ճգնաժամ կրոնական տեսակետը, որ մարմնավոր կարիքների ուրացումը ցույց է տալիս կամ զարգացում է կրոնական բարեպաշտություն: Օրինակներ են՝ (1) մարմնի կերակուրը մերժելը, (2) ամուրիությունը, (3) ձմռանը քիչ հագուստ կրելը, և այլն: Սա հունական այն տեսակետի հետևանքն է, որը պնդում է, որ մարմինը (մատերիան) չար է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ընդդեմ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ (Հռոմ. 14:1-15:13-ից)

SPECIAL TOPIC: CHRISTIAN FREEDOM VS. CHRISTIAN RESPONSIBILITY (from Rom.14:1-15:13)

Ա. Հռոմեացիների 14:1-15:13-ը փորձում է հավասարակշռության բերել Քրիստոնեական ազատության ու պատասխանատվության պարադոքսը:

Բ. Այս գլուխն ընդգրկող խնդիրը հավանաբար Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև եղած լարվածությունն էր: Դարձի գալուց առաջ հրեաները հակված էին օրինապահ լինելու, իսկ հեթանոսները՝ անբարո: Հիշեք, որ այս գլուխը ուղղված է Հիսուսի անկեղծ հետևորդներին: Այն ուղղված չէ մարմնավոր՝ աշխարհիկ հավատացյալներին (տես՝ 1 Կորնթ.3:1): Երկու խմբերին էլ վերագրված է ամենաբարձր շարժառիթը՝ դրդապատճառը: Երկու կողմում էլ ծայրահեղությունների դեպքում վտանգն առկա էր: Այս քննարկումը արտոնություն չէր տալիս պերճախոս օրինապահությանը կամ ցուցամոլ ազատականությանը:

Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որպեսզի իրենց աստվածաբանությունը կամ էթիկան՝ բարոյագիտությունը չդարձնեն չափանիշ բոլոր մյուս հավատացյալների համար (տես՝ 2 Կորնթ.10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, սակայն հասկանան, որ իրենց աստվածաբանությունը ավտոմատ կերպով չի դառնում Աստծունը: Հավատացյալները դեռևս մեղքի ներգործության տակ ընկնում են: Մենք պետք է իրար քաջալերենք, հորդորենք և Սուրբ Գրքից իրար սովորեցնենք, խորհրդածենք և ապրենք դրանք, սակայն միշտ սիրո մեջ: Որքան շատ ենք իմանում, այնքան հասկանում ենք, որ ոչինչ էլ չգիտենք (տես՝ 1 Կորնթ.13:12):

Դ. Մարդու գործողությունները գնահատելու իրական միջոցները Աստծո առջև նրա վերաբերմունքն ու շարժառիթներն են: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առջև դատվելու, թե ինչպես են միմյանց վերաբերվել (տես՝ Գործք 15:10,12 և 2 Կորնթ.5:10):

Ե. Մարթին Լյութերն ասել է՝ «Քրիստոնյան բոլորից ամենաազատ տերն է, որ չի ենթարկվում ոչ ոքի. Քրիստոնյան բոլորից ամենապատասխանատու ծառան է՝ ենթակա բոլորին»: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է ծայրաստիճան պարադոքսալ վիճակում (ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՐԱԴՈՔՍԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ):

2. Այս դժվար, սակայն շատ կարևոր նյութը արժարժվում է մի ամբողջ Հռոմեացիների 14:1-15:13 գրական բաժնում, ինչպես նաև 1 Կորնթացիների 8-10 և Կողոսացիների 2:8-23-ում:

Է. Այնուամենայնիվ պետք է ասել, որ անկեղծ նվիրումով հավատացյալների մեջ բազմազանությունը վատ բան չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի թե՛ առավելություններ և թե՛ թերություններ: Յուրաքանչյուրս պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով Հոգու և Աստծո Խոսքի ավելի շատ լույսի համար: Կյանքի դժվարին կացությունների ընթացքում էլ (1 Կորնթ. 13:8-13) մարդը պետք է քայլի սիրո (Գործք 15:15) և խաղաղության մեջ (Գործք 15:17, 19) փոխադարձ շինության համար:

Ը. «Ավելի ուժեղ» և «ավելի թույլ» անվանումները, որը Պողոսը տալիս է այս խմբերին, նախատրամադրում է նրանց մեր հանդեպ: Անշուշտ սա Պողոսի մտադրությունը չէր: Երկու խմբերն էլ անկեղծ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք ուրիշ Քրիստոնյաների ձուլենք մեր հետ: Մենք Քրիստոսի մեջ Նրանով ենք իրար ընդունում:

Թ. Ամբողջ վիճաբանությունը կարելի է հակիրճ՝ համառոտ ներկայացնել որպես՝

1. իրար ընդունեք, քանի որ Աստված էլ մեզ է ընդունում Քրիստոսով (տես՝ Հռոմ. 14:1,3, 15:7)
2. իրար մի՛ դատեք, քանի որ Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (տես՝ Հռոմ. 14:3-12)
3. սերն ավելի կարևոր է, քան անձնական ազատությունը (տես՝ Հռոմ. 14:13-23)
4. հետևե՛ք Քրիստոսի օրինակին և վայր դրեք ձեր իրավունքները հանուն ուրիշների շինության և բարօրության (տես՝ Հռոմ. 15:1-13):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նկարագրեք սուտ վարդապետների վարդապետությունը: Ինչո՞ւ էին նրանք այդքան վտանգավոր:
2. Ովքե՞ր կամ ինչե՞ր են «տարրական սկզբունքները» (*stoicheia*, տես՝ 2:8,15):
3. Հիսուսն Աստված էր, թե՞ մարդ: Ինչո՞ւ է սա այդքան կարևոր:
4. Ի՞նչ կապ ունի Հիսուսը հրեշտակային իշխանությունների հետ:
5. Ինչո՞ւ է օրինապաշտությունը, ճգնավորությունը այդքան վտանգավոր (տես՝ Կող. 2:16-23):
6. Թվարկեք այս բաժնում առկա գնոստիկ տերմինները: